

ուանց իր ծանրութիւնն ու գոյացութիւնը կորսնցնելու, մագնիսական ձգողութեան տակ ընկնող մետաղները մագնիսութիւն կ'առնեն ու մագնիսական լրջ կը հանեն. մաքուր ջուրը կը լուծուի, և այլն: Ըստ գիւտով այնչափ մեծցաւ Ս յլթային անուէն որ Ստլանտեան ուկրանտար թափող գետերէն մէկուն անուէնը Ս յլթա դրին, և ինքը ամէն մեծամեծաց սիրելի եղաւ: Պոնափաութէն անանկ մեծ համարումուներ աս երեւելի մարդուն վրայ, որ սիւնակին գիւտը լսելով՝ մրցանակ մը խոստացաւ 60,000 Ֆրանքի ան մարդուն որ ելքտրական ու մագնիսական ուսմունքը Ֆրանքլինին ու Ս յլթային չափ առաջ տանի. վերջը ասպետութեան պատիւ տուաւ Ս յլթային, ու Լատալայի թագաւորութեան կոմս ու խորհրդական անուանեց:

Հասակաւ բարձր ու գեղեցիկ էր Ս յլթա. միտքը սուր ու բարակ, քաղցրաբարոյ, բարեպաշտ ու սրտոտ: Կարստութեան ու գովասանքներու մէջ խոնարհ եղաւ. և ազատութեան, խտրութեանց ու շողջորթութեան գարուն մէջ անարատ: Ըստ ճամբորդութիւններ ըրաւ Լատալիա, Վերմանիա, Ղազղիա ու Ղնգղիա, և ամէն տեղ մեծ պատիւ գտաւ: Երբէն Լատալիա դառնալով, Լոմպարտիայի մէջ գետնախնձորի մշակութիւնը ինքը խտրեց, որով աղքատաց շատ օգտակար բան ըրաւ:

1827ին մարտի 5^ը Ս յլթային վերջի որը եղաւ Վրոմոյ քաղքին մէջ. ուր մեծամեծները փառաւոր թաղումըրին իրեն, ու ետքը շատ յիշատակներ կանգնեցին. ասոնց մէջ ամենէն փառաւորը Վրոմոյի մէջի արձանն է Վարրալայի ազնիւ մարմարիոնէ՝ 6 կանգուն բարձր, որ 1834ին սկսաւ փորուիլ, ու չորս տարիէն ետքը լմնցաւ:

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Չինաց գարնան դարչին կանդէսը:

ՎԱՐՆԱՆ սկիզբը կը ժողովուին քառասուն ծեր երկրագործք ինքնակալին օգնելու համար գարնան հանդէսը բանալու, և պատրաստելու հինգ տեսակ սերմանելու հունտերը, որ են ցորեն, բրինձ, բակլայ, և մեծ ու պզտիկ կորեակ:

Ինքնակալը հանդիսի հագուստով կ'երթայ իր պալատականներովը որոշուած տեղը (ըստ Չինաց Վէնո) որ արտավարի չափ տեղ է, գարնան զոհ մը ընելու Ստուծոյ, որ ընդունին երկնքէն առատութիւն և բերքերուն պահպանութիւն: Օոհէն վերջը կ'ինջնայ իր իշխաններովը և դատաստանարանին ինքոստիկաներովը. իշխաններէն շատը կը բերեն տուփեր որոնց մէջ դրած են ցանելու սերմերը: Երբոր ամէնքը մտադրութեամբ լուռ կը կենան, ինքնակալը կ'առնէ արօրը և քանի մը ակօս կը բանայ. իշխանները և ինք ոստիկանները կարգաւ կ'ընեն նոյն գործողութիւնը ինքնակալէն վերջը, որ կը ցանէ հինգ տեսակ հունտերէն. քառասուն երկրագործներ ալ կը լմնցնեն հերկելը և ցանելը բոլոր այն արտավարը:

Բայց շատ մեծ հանդիսով կը կատարեն Չինացիք այս երկրագործական սունը. բոլոր արքունեաց մանտարիները, ծիսարարները, և դատաստանի ուրիշ պաշտօնեաները, որը լուսնալուն պէս պալատէն կ'ելլեն զոհին ներկայ գտուելու: Օոհէն ետեւ տասը հոգի առաջին կարգի սպաներէն՝ պահպանութեան համար ինքնակալին չորս դին կը կենան. որ կը հանէ հանդիսի զգեստները, ասանկ ալ իշխանները և մեծամեծները որ պիտի ցանեն: Երարողապետը, մեծ նախարարները և մէկալ պաշտօնեաները կը ժողովուին արտավարին մէջտեղը. չորս պատուաւոր ծերեր, տասնչորս երգիչներ, երեսունըվեց երաժիշտներ, քսան գեղացիներ յարդեայ գլխարկ-

ներով, և ձեռքերնին բռնած աշխատանաց զանազան գործիքներ, կարգաւ կը կենան, արտին աջ ու ձախ կողմը, այսպէս նաև յիսուն գրօշակիրներ, և երեսուն երկրագործներ :

Երբոր երկրագործութեան ժամանակը կը հասնի, առաջին մանտարինը կ'երթայ պալատը կը հրաւիրէ ինքնակալը . երբոր ինքնակալը իշխաններուն հետ հան կը հասնի, ծխարարներուն նախագահ մանտարինը կ'ըսէ բարձր ձայնով մը . Երբոր առաջ բերէք : Սէկէն ատենական ժողովքին զլիաւորը, երեսը դէպ ՚ի հիւսիս ծրնկան վրայ եկած կը մատուցանէ ինքնակալին արօրին կոթը և խթանը : Երկու ծեր կը լծեն եզները, և երկու առաջին կարգի երկրագործներ կը բռնեն արօրը . գրօշները ամէն կողմ կը ծածանին, երգիչները կ'երգեն, նուագարանները կը հրնչեն . ինքնակալը իրէք ակօս կը բանայ, ու կը թողու արօրը և խթանը : Են ատենը իշխանները, մեծամեծները և մանտարինները ամէն մէկը հինգ հինգ ակօս կը բանան . նոյնպէս մեծ սպաները և արքունի իշխանները որոնք որ իրաւունք ունին հանդէսին ներկայ ըլլալու : Եմէն բանը լըմընալէն վերջը, մանտարինները՝ իշխանները, մեծամեծները, ծերերը և երկրագործները, երեսնին հիւսիսային կողմը դարձուցած, ծխապետին ձայնը լսելուն պէս՝ իրէք անգամ ծրնկան վրայ կուգան, և ճակատնին գետինը կը զարնեն խոնարհութեամբ՝ մեծափառ ինքնակալին շնորհակալ ըլլալու :

Ինքնակալը՝ պալատը դառնալու համար փառաւոր կառք մը կը հեծնայ, առջևէն երաժիշտներու և երգիչներու դասեր, և ամէն պալատականները չորս զին շարուած : Եոյն օրը ամէն նահանգներու մէջ, իւրաքանչիւր քաղաքին քաղաքապետը կ'ելլէ իր պալատէն՝ առջևէն տանել տարով իրեն նշաները և անհամար վառած ջահեր, զանազան երաժշտական ձայներով, ինքն ալ ծաղկրներով պսակուած . իր ետևէն կը տանին կերպասով զարդարած դեսպակներ,

որոնց մէջ կը դնեն երկրագործութե օգուտ ընող՝ այսինքն ծաղկեցրնող մարդկանց կերպարանքները : Նամբաները կերպասներով կը զարդարեն . և իրարմէ որոշուած հեռաւորութեամբ ատղ ատղ յաղթական կամարներ կը շինեն և կանթեղներ կը կախեն : Եմէն տարի քաղաքապետները կը ծանուցանեն ինքնակալին իրենց երկրին մէջի երևելի երկրագործին անունը, չէ թէ միայն երկրագործութեան արուեստին մէջ անուանի գտնուելուն համար՝ հապանաև առաքինութեանց և բարեպաշտութեան մէջ . քաղաքապետին վրկայութեամբը ինքնակալը կը պատուէ աս երկրագործը և պատուոյ անուամբ մանտարիններուն ութերորդ կարգը կ'անցընէ, որով այն երկրագործը իրաւունք կ'ունենայ մանտարինի զգեստ հագնելու, քաղաքապետին այցելութե երթալու, անոր դիմացը նստելու, և անոր հետ չայ խմելու . թող ուրիշ ընկերութեան մէջ առած պատիւները . երբոր մեռնի՝ իրեն աստիճանին յարմար յուղարկաւորութիւն կ'ընեն և անունը կը գրուի նախնեաց սրահին մէջ և տէրութեան լաւ ծառայողներուն կարգին մէջ :

Ես ալ պէտք չէ մննալ որ ինքնակալը՝ և անոնք որ մասնակից պիտի ըլլան այս երկրագործական մեծ տօնին, իրէք օր առաջ պահք պահելով պատրաստութիւն կը տեսնեն զօհին, զոր կ'ընծայէ ինքնակալը բոլոր ազգին կողմանէ : Եյն արտավարէն ժողովուած բերքը զգուշութեամբ և պատուով կը պահեն . և կ'իմացընեն ինքնակալին, և միայն երևելի զօհերու ատեն կը գործածեն, երբոր ինքնակալը կը նուիրէ երկնից՝ իբրև հայր և մայր բոլոր ինքնակալութեանը : Եյսպէս աս իմաստուն ազգը միշտ կրօնական պաշտամունքը կը միացընէ ազգային հանդէսներու :

Չինացիք խելքով կը դատեն թէ միայն կրօնքը կրնայ մեծութիւն մը և փառաւորութիւն մը տալ ընկերական գաղափարներու ալ և ամէն արարողութեանց ալ, թէ քաղաքական ըլլայ թէ

տէրութեան վերաբերեալ երբոր բոլոր
ազգին կողմանէ կը կատարուի : Ըսով
է որ Չինաց ինքնակալը այնպէս մեծ և
պատկառելի կ'երևնայ իր ժողովրդեա-

նր , և այս բանին համար իրաւամբ
պէտք է որ ամենայն թագաւորաց նա-
խանձելի ըլլայ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲԺՇՎՈՒԹԵԱՆ ԽՐԱՏՆԵՐ

Պուստեալ Սեբաստացի Բժշկին Խրատները :

ՀԻՒԱՆԻՒՆ Ըստուած է դեղ՝ որ մահու է տէր և կենաց .
Օ հէքիմըն սէպէպ ասեն , խելքբաց է բանս ասացած ,
Իմէ զՂալինսոն ' ասեն և զՂոխման ' բազմաց վըկայած .
Հրամանն 'ի վերուստ պիտի որ օգնէ՝ բժիշկըն գոված :

Բայց որ զարհեստըս նախատեն իբր անպիտան ,
Եւ ոչ յիմար մրտօք սըմին ծանօթացան ,
Իոյնք իմաստուն զանձն և ներհուն համարեցան ,
Բզտեսութիւն մըտաց ունին յոյժ յաղթական ,

Եւ 'ի գըրոց իմաստութեանց ոչ վարժեցան ,
Եւ ոչ 'ի սպառ ժուժկալեցին 'ի կէտ ուսման .
Եւ մանաւանդ ուսումնականքս որ այժմըս կան .
Եւ 'ի յինքեանց յանձնէ առնեն դեղ անպիտան .

Կամ 'ի ցաւոցն են անծանօթ ը' անհմտական .
Եւ զստածումն ոչ ճանաչեն և ոչ ըզգան .
Եւ շակերտաց կարգէ լինին փախստական ,
Իրժիշկ անուամբ են և շըջին յոյժ պերճական :

Իսկ որ թիւրեալ բանիւ խօսին սըխալական ,
Եւ զոր առնեն ոչ կատարի ճշմարտաբան .
Ոչ զի արհեստն է անկատար և թիւրաբան ,
Եւ որ կարծեօք զանձնէ ասեն գիտնողական ,

Ս'ի այլասեռ ազգաց լիջիր խնդրող ուսման ,
Ս'ի աղքատաց մեծամըտիր որպէս իշխան .
Եւ ան 'ի քեզ որպէս 'ի փշոց վարդ հոտեան ,
Եւ թէ անօթ չնորհաց տեսցես և պատուական :

Եւ ես Պուստեալ Սեբաստացի բժիշկ անուամբ ,
Որ 'ի յարհեստս իմ աշխատեր մեծաւ տենչմամբ .
Օ ձեզ աղաչեմ ով որ կարդայք սակաւ զայս բան .
Օ իս զանարժանս հայր մեղայի առնէք արժան :

1 Գաղղենոս անուանի Յոյն բժիշկը երկրորդ գարուն մէջ :
2 Լոբման , Արաբացւոց հին խիկարն կամ առակախօսն է :